ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07 հունիսի 2020թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի անդամները և տնօրենի պաշտոնակատար պ-ն Ա.Մակարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփում:

2.Ուսումնական պլանում հետազոտական բաղադրիչի ներդրման մասին:

3.Ընթացիկ հարցեր:

/զեկ. Մ.Զաքարյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ.Զաքարյանը:

1. ԼՍԵՑԻՆ- Ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփում :

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ.Զաքարյանը: Նա ներկայացրեց Ի/ԿՄ կրթական ծրագրով ինֆորմատիկա և քարտեզագրություն և Կ/Գ կրթական ծրագրով աշխարհագրություն մասնագիտությունների ավարտական աշխատանք ների պաշտպանության արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Սիմոնյանը, Ա. Հովակիմյանը :

Գ. Սիմոնյանը զեկուցումով հանդես եկավ այն մասին, որ մայիսի 29-ին տեղի է ունեցել «*Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտության շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Հանձնաժողովը գլխավորում էր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի բաժնի պետ, տեխն. գ. թ., դոցենտ Խաչատուր Աշոտի Ղազեյանը:

Իսկ հանձնաժողովի անդամներն էին՝

1. Սիմոնյան Գևորգ Սարգիսի-ԸՄԲ ամբիոնի վարիչի պաշտոնակատար,ք.գ.թ.,դոցենտ,
2. Դավթյան Սմբատ Ռուբիկի-ԸՄԲ ամբիոնի ասիստենտ,տեխն.գ.թ.,
3. Հակոբյան Արթուր Պայքարի-ԸՄԲ ամբիոնի դասախոս,
4. Նազարյան Արծրուն Հրանտի-ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ,
5. Այդինյան Արթուր Համլետի-Իջևանի քաղաքապետարանի քաղաքշինության բաժնի պետ:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 16 շրջանավարտ, որոնցից 6-ը ստացավ «գերազանց», 7-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար:

Պաշտպանության արդյունքներն ամփոփելով՝ հանձնաժողովի նախագահն արձանագրել է հետևյալը.

«Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ հանձնաժողովի նախագահն առաջարկել է ավարտական աշխատանքների թեմաները ձևակերպել քիչ ընդհանրական: Հնարավորություն դեպքում ապահովել ուսանողների պրակտիկաները համապատասխան այն մարմիններում, որոնք իրականացնում են ավարտական աշխատանքի թեմային վերաբերող քաղաքականություն, աշխատանքներն ուղարկել արտաքին գրախոսման»:

Երկրորդ հարցի վերաբերյալ Ա.Հովակիմյանը զեկուցումով հանդես եկավ այն մասին, որ մայիսի 24-ին տեղի է ունեցել *«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)»* մասնագիտության շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Հանձնաժողովը գլխավորում էր «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ինստիտուտի ալգորիթմական լեզուների և ծրագրավորման ամբիոնի դոցենտ, տեխն.գ. թ. **Նարինե Ալբերտի Կոսյանը**:

Իսկ հանձնաժողովի անդամներն էին՝

1.Մանվել Աշոտի Զաքարյանը - Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,ֆ. մ. գ. թ, դոցենտ

2.Աննա Սեդրակի Հովակիմյանը - Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար,տեխ.գ.թ,դոցենտ

3.Ռոբերտ Մառլենի Յոլչյանը - Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ,տեխ. գ. թ, դոցենտ

4.Արտաշես Բարսեղի Թովմասյանը - Digital Wave ընկերության տնօրեն

5.Կիմ Ֆուրմանովի Սարոյանը - Տվյալների բազայի ճարտարապետ, տվյալների բազաների ադմինիստրացիայի թիմի ղեկավար:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 17 շրջանավարտ, որոնցից 6-ը ստացել են «գերազանց», 8-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար» գնահատական:

Պաշտպանության արդյունքներն ամփոփելով՝ հանձնաժողովի նախագահն արձանագրել է հետևյալը. «Ներկայացվել են տարբեր խնդիրներ և հատկապես կիրառական նշանակություն ունեցող աշխատանքներ, նույնիսկ կային ակնհայտ արդյունքներ: Կային թեմաներ, որոնք ունեին շատ հետաքրքիր ստարտափի նշանակություն: Իհարկե կարիք կա որոշ տեխնիկական բաղադրիչի զարգացման (էլեկտրոնիկա, սարքեր, տեխնիկական միջոցներ): Սա լավ հեռանկար է շուկայում պահանջարկ ունեցող թեմաների ակտիվացման համար: Լավ տպավորություն ունենք խաղերի թեմայից, դասերի հարթակի թեմայից. կարելի է առաջարկել շուկայում: Գրավիչ էին պատրաստված կայքերը, որոնք անցած տարի էլ կային, և դա տպավորիչ է: Հետաքրքիր էին տեխնիկական լուծումներ ստացած երկու թեմաները՝ սրտի զարկերի հետազոտության թեման և ձայնի անալիզատորի թեման: Դրանք շատ լավ կարող են ծառայել մեր տնտեսությանը, անգամ պաշտպանական խնդիրներին: Ցանկալի է ավելի կիրառական ուղղություն տալ

մաթեմատիկական խնդիրների թեմաներին: Լավ թեմաների համար հարկավոր է հավաքագրել, համակարգել ու ընտրել առավել շուկայական գրավչություն ունեցող թեմաները և զարգացնել դրանք: Պետք է մարկետինգի բաղադրիչ նշել կամ ավելացնել հաջորդ տարվա ներկայացվող ավարտական աշխատանքներում: Ընդհանուր առմամբ, արտակարգ իրավիճակի պայմաններում, տպավորված ենք այսօրվա աշխատանքներից, զգացվում է որակի բարձրացման դինամիկան»:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով հանձնաժողովի նախագահի դիտողությունները և առաջարկությունները ավարտական աշխատանքները հետագայում ուղարկել արտաքին գրախոսման, հետագայում էլ ավելի շատ ներառել շուկային հետաքրքրող թեմաներ:

2. **ԼՍԵՑԻՆ** - Ուսումնական պլանում հետազոտական բաղադրիչի ներդրման մասին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ.Զաքարյանը ներկայացրեց, որ սկսած 2020 -2021 ուս.տարվանից ուսումնական պլաններից հանվում են կուրսային աշխատանքները 3-րդ և 4-րդ կուրսերում: Ուսանողների հետազոտությունը կազմակերպելու նպատակով ուսումնական պլաններում պետք է ներառել հետազոտական բաղադրիչ, որը խթանելու է ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքը:

Նշվեց, որ հետազոտական աշխատանքը պետք է իրականացնել ուսումնական առարկաների շրջանակում: Կարելի է ընտրել 2-ից մինչև 6 առարկա ՝ սկսած 4-րդ կիսամյակից մինչև 7-րդ կիսամյակը ներառյալ: Ենթադրվում է, որ տվյալ կուրսի բալոր ուսանողները պետք է կատարեն հետազոտական աշխատանք ընտրված առարկայի շրջանակում՝ անհատապես կամ խմբային:

Հետազոտական աշխատանքը պետք է ապահովի համապատասխան ելքային արդյունքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ.Զաքարյանը, Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Ք.Օթարյանը:

Մ.Զաքարյանը, Ա.Հովակիմյանը, Ք.Օթարյանը նշեցին, որ ցանկալի է ընտրվող առարկաները առնչվեն և՛ մաթեմատիկայի, և՛ նրա կիրառությունների հետ, իսկ աշխատանքները պարտադիր ներառեն հետազոտած խնդիրների ծրագրային իրականացում:

ՈՐՈՇԵՑԻՆ *– 1.* Հաստատել ըստ ուսումնական տարիների ներքոհիշյալ դասընթացներում ներդնել հետազոտական բաղադրիչ՝

Ինֆորմատիկա մասնագիտություն.

2020-2024 ուստարի

- «Օպերացիոն համակարգեր» ՝ 4-րդ կիսամյակ- (0կրեդիտ)
- «Մաթ. մոդելավորում և թվային մեթոդներ»՝ 5-րդ կիսամյակ- (0կրեդիտ)
- «Գործույթների հետազոտում»՝ 6-րդ կիսամյակ – (+2կրեդիտ)
- «Web ծրագրավորում»՝ 7-րդ կիսամյակ- (+2կրեդիտ)

2019-2023 ուստարի

- «Օպերացիոն համակարգեր» ՝ 4-րդ կիսամյակ- (0կրեդիտ)
- «Մաթ. մոդելավորում և թվային մեթոդներ»՝ 5-րդ կիսամյակ- (0կրեդիտ)
- «Գործույթների հետազոտում»՝ 6-րդ կիսամյակ – (+2կրեդիտ)
- «Web ծրագրավորում»՝ 7-րդ կիսամյակ- (+2կրեդիտ)

2018-2022 ուստարի

- «Մաթ. մոդելավորում և թվային մեթոդներ»՝ 5-րդ կիսամյակ- (0կրեդիտ)
- «Գործույթների հետազոտում»՝ 6-րդ կիսամյակ – (+2կրեդիտ)
- «Web ծրագրավորում»՝ 7-րդ կիսամյակ- (+2կրեդիտ)

2017-2021 ուստարի

- «Web ծրագրավորում»՝ 7-րդ կիսամյակ- (+2կրեդիտ)
-

Բնապահպանություն և բնօգտագործում՝

- «Անտառաշինություն և անտառօգտագործման հիմունքներ» ՝ 6-րդ կիսամյակ
- «Ագրոէկոլոգիա»՝ 7-րդ կիսամյակ

Քարտեզագրություն և կադաստրային գործ

- «Հողային ռեսուրսների կառավարում»՝ 7-րդ կիսամյակ

2. Առաջարկություններով հանդես գալ կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչով պայմանավորված փոփոխություններ կատարելու ուղղությամբ:
3. Հանձնարարել տվյալ առարկաները դասավանդող դասախոսներին վերանայել առարկայական ծրագրերը և պորտֆոլիոները, ձևակերպել առարկաների վերջնարդյունքները կապված հետազոտական աշխատանքի հետ, մշակել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքի վերահսկման և արդյունքների գնահատման մեխանիզմներ:

ՆԱԽԱԳԱՀ Մ.Ա.ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ